ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարության
«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ»
Պ Ո Ա Կ

Ministry of labor and
social issues
"CHILDREN'S HOME OF
YEREVAN" SNCC

25.02.2015թ

Հավելված 7
<u>ՇՅԱՊՁԲ -11/1- ԵՄՏ-15/2 ծածկագրով</u>
<u>ընթացակարգի հրավեր</u>
< ԳԱԿ –ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի
միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ-ի (այսուհետև` ԵՄՏ-Ի) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք(ներ): Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/1-ԵՄՏ-15/2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ա. Արմենակյան 119 հասցեով, մինչև 2015թ. մարտի 9-ը , ժամը՝ 11-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ.Թադևոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն << Երևանի <<Մանկան տուն >> ՊՈԱԿ-ի շենքում, Ա. Արմենակյան 119 հասցեով, խորհրդակցությունների սենյակում , 2015թ մարտի 9-ին , ժամը 11-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վառելիքի ձեռքբերումը:

<<Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ վառելիքի մատակարարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի

մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման ) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N 5),* ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N 5.1):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտը անհրաժեշտ է ներկայացնել ՇՅԱՊՁԲ -11/1- ԵՄՏ-15/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

mankantun1937@mail.ru:

Եթե հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով , ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է , որ մասնակիցը օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և /կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և / կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և / կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում ՝

- Նման փաստաթղթերի և /կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով հիմք ընդունելով օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները ,
- Նման պահանջի դեպքում , մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները , ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների պատվիրատուի կողմից ուղղարկվող հրավերով (ծանուցմամբ )՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության

նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ ) դրույթինրի ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և / կամ տվյալները:

Հարգանքով՝

<<Երևանի <<Մանկան տուն>> ՊՈԱԿ

Տնօրեն Լ. Կարապետյան

0047, Երևան Ա. Արմենակյան 119
ֆաքս. (651291) հեռ. 651291
Fax ( 651291) Tel. 651291

0047, Yerevan, Armenakian 119